2021, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (579)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի առիթով

Սուրբ Աստվածածնի Ավետման տոնը պետական տոնակարգում հաստատված է որպես Մայրության, գեղեցկության եւ սիրո տոն: Այս օրը մեր եկեղեցիներում կատարում ենք օրհնության կարգ՝ մայրության բերկրանքին սպասող կանանց համար, մաղթանքով, որ Աստված շնորհաշատ զավակներ պարգեւի եւ լիառատ պահի սերն ու համերաշխությունը ընտանեկան հարկի ներքո: Հոգեւորոգ տոնի առիթով հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում բոլորին, ի մասնավորի՝ մայրության բերկրանքին սպասող կանանց:

Այսօր մեր սուրբ եկեղեցիներից Աստվածածնի Ավետման հրեշտակաձայն ավետիսն է հնչում. «Ուրախ եղիր, ով շնորհընկալ, Տերը քեզ հետ է»: Փրկչի աշխարհ գալու բերկրալի լուրը, որն առաջինը լսեց Սուրբ Տիրամայրը, նորոգել եւ օրհնությամբ է լցրել նաեւ մեր ժողովրդի կյանքը: Դարեր շարունակ այս լուսաբեր ավետիսով ոգեշնչվել եւ զորացել է քրիստոնյա մեր ժողովուրդը, իսկ մեր մայրերն ու քույրերը, օրինակ ունենալով Սուրբ Կույսին, նվիրագործել են իրենց կյանքը՝ ապրելով հավատքով եւ առ հայրենին սիրով ու հավատարմությամբ:

Մեր ժողովրդի համար դժվարին այս օրերին Սուրբ Հոգու սփոփանքն ու Բարձրյալի զորակցությունն ենք հայցում ազգիս բոլոր զավակներին, ի մասնավորի՝ արցախյան նոր պատերազմի կորուստների ու արհավիրքների ցավը կրող մայրերին, քույրերին ու դուստրերին:

Աղոթում ենք, որ Տիրամոր բարեխոսությամբ հարուցյալ Փրկիչը խաղաղություն ու բարօրություն պարգեւի համայն աշխարհին, մեր երկրին ու հավատավոր ժողովրդին: Թող Տիրոջ հանապազ պահպանությունն ու շնորհները հովանի լինեն մայրության բերկրանքին սպասող կանանց, որ աստվածպաշտության, հայրենանվիրումի ու ազգանվիրումի ոգով սնեն ու դաստիարակեն իրենց զավակներին, եւ Աստված բոլոր կանանց, մայրերին ու քույրերին պարգեւի երջանկություն, բարօրություն ու ամենայն բարիք, այսօր եւ միշտ. ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի դասգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առիթով

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»
(Շարական Հարության):

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Այսօր Սուրբ Հարության հրաշափառ տոնն է, տոն՝ վերհառնումի, մեղքի ու մահվան հանդեպ հաղթության: Քրիստոս հարություն է առել, բացվել է գերեզմանի դուռը, հրեշտակները կյանքի լուսեղեն ավետիսն են բերել, առաքյալները զորացել եւ ոգեշնչվել են հարուցյալ Փրկչի հայտնությամբ: Սքանչելախորհուրդ Հարությամբ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մարդկությանը պարգեւեց գողգոթաներից հառնելու, մահին հաղթելու եւ հավիտենական կյանքը ժառանգելու երկնային շնորհը: Մենք այդ վստահությամբ ենք քաջալերվում, նաեւ գոտեպնդվում նեղությունների ու վշտերի, մահվան ահասարսուռ իրողության հանդիմաց՝ ունենալով հաստատուն հավատը, որ Քրիստոս հարություն է առել եւ նորոգել է կյանքը, դուրս բերել մարդկությանը մեղքի ու չարիքի խավարից, հաշտություն հաստատել մարդու եւ Աստծո միջեւ: «Աստված հավիտենական կյանք տվեց մեզ. եւ այդ այն կյանքն է, որ Նրա Որդու մեջ է»,– ասում է առաքյալը (Ա Հովհ. 5.11): Քրիստոսի Հարությամբ բացվել է օրհնյալ կյանքի, հույսի, սիրո, խաղաղության ու համերաշխության լուսավոր ուղին: Այս կենարար ճանապարհից շեղումը հարության փոխարեն մահ ու ավեր է սփռում, փրկության փոխարեն՝ դատապարտություն եւ կործանում, կյանքը դարձնում ատելության, բաժանումների հորձանուտ՝ լի չարի փորձություններով ու վտանգներով:

Սիրելիներ, անցյալ տարի մեր ժողովուրդը Փրկչի նմանությամբ վերստին կրեց խաչելության տառապանքը: Պատերազմի դժոխային հնոցում չարչարանաց գողգոթա անցնելով՝ զոհվեցին հազարավոր մեր սիրասուն զավակներ, կորցրեցինք Արցախի՝ հարազատ հայրենիքի զգալի մասը: Ինչպես պատերազմից առաջ, այնպես եւ հետպատերազմյան շրջանում մեր կյանքում հաստատուն չեղան տերունապատվեր սիրո եւ համերաշխության նախանձախնդրությունը, Աստծո պատգամների համաձայն կենսակերպը: Պառակտումներն ու սերմանվող ատելությունը, անհանդուրժողության ոգին, շարունակվող քաղաքական ալեկոծումները նոր ցնցումների ու անկումների վտանգի առջեւ են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին՝ ստվերելով նաեւ հայրենանվիրումի ու ազգասիրության վեհ գաղափարները: Իսկ հայրենիքի անվտանգության չփարատվող մտահոգությունը, հայրենական կյանքի տեսլականի բացակայությունը, հիասթափությունն ու հուսախաբությունը անորոշության խավարով են մթագնել ապագայատեսիլ մեր հույսերը: Ոչ մի հանգամանք, ոչ մի նպատակ, ոչինչ չի կարող արդարացնել ազգի ու հայրենիքի մասնատումն ու տկարացումը, ազգային եւ հոգեւոր մեր արժեքների, նախնյաց ավանդների ոտնահարումը, նոր սերնդի ապազգայնացումն ու բարոյազրկումը, ազգի արժանապատվության ու պատվի նսեմացումը: Մեր առջեւ ծառացած քաղաքական, տնտեսական, սոցիալական բարդ հիմնախնդիրների հանդիման, ճգնաժամային դժվարին հանգամանքներում թաղման անձավի մեջ մնալով, իրավիճակից դուրս ելնելու անհրաժեշտ գործողություններում հապաղելով՝ մեր խաչելությունը չի պսակվի հարության կենարար զորությամբ: Հարությունը չի կայանում մերժելի ատելությամբ ու թշնամանքով, բաժանումով ու քայքայումով, այլ սիրով եւ հայրենյաց սիրո շուրջ համախմբումով, նեղություններն ու դժվարությունները միասնաբար հաղթահարելով: Մեր ժողովրդի կյանքը ի հայրենիս եւ ի սփյուռս սպասում է վշտերի անհապաղ սփոփման, չարչարանքներից հառնումի եւ հաղթական հարության: Քրիստոսի պարգեւած փրկության եւ հարության լույսը, սիրելիներ, ճառագում է զոհողություններ ստանձնելու առաքինության միջոցով, զոհողություններ մեկս մյուսի հանդեպ, զոհողություններ ի սեր ողջ ժողովրդի: Այս լույսի ներքո է, որ եսապաշտությունն ընկրկում է աստվածապաշտության առջեւ, մահաբեր ընթացքը շրջվում է դեպի կենսատու Աստված, տառապանքների մատնող գործողությունները փոխակերպվում են հարուցյալ կյանքի արարումների՝ առաջնորդելով փրկության ու հավիտենության: Մեր երկիրն ու ժողովրդին պատուհասներից վեր հանելը, Արցախի կյանքը ավերներից բարձրացնելը եւ հայության ու հայրենիքի վերածնունդը հրամայական հանձնառություն են՝ իրագործելի ազգի բոլոր զավակների, քաղաքական կուսակցությունների, մասնավորապես մեծագույն պատասխանատվությունը կրող իշխանությունների կողմից: Հայրենաշեն ջանքերը կպսակվեն հաջողությամբ օրհասական իրավիճակից պետականությունը փրկելու նախանձախնդրությամբ, անձնական հավակնություններից հրաժարվելով, պետության ու ազգի շահը գերադասելով:

➥ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսի դատգամը...

➥ էջ 1

Այս ոգով հաղթական հանգրվանի պիտի հասցնենք մեր ցավագին կորուստների վերականգնման, մեր ազգային իրավունքների պաշտպանության, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման մեր նվիրական ձգտումները:

Սիրելիներ, Քրիստոս հարություն է առել եւ մեզ պարգեւել զորությունը նորոգելու մեր հոգիները, մեր կյանքը: Չհուսալքվենք ու թեւաթափ չլինենք մեզ պաշարած փորձությունների հանդիման: Զորացյալ մնանք հարության հավատով: Հարության հրաշքը կենսագործենք մեր երկրում ու կյանքում: Ջերմ իղձերով փարված մնանք մեր հարազատ բնօրրանին՝ մեր հողին, ջրին, մեր օջախին՝ կանխելու համար արտագաղթը հայրենիքից եւ հզորացնելու մեր պետությունը: Տիրոջ զորակցությամբ հաղթահարելու ենք մեր կյանքի դառնություններն ու արհավիրքները՝ հասնելով մեր հույսերի ու տեսիլքների իրագործմանը եւ հարուցյալ նոր կյանքի կերտմանը:

Հոգենորոգ այս օրը աղոթք բարձրացնենք, որ Փրկիչ մեր Տիրոջ օրհնությունն ու շնորհները սփռվեն մարդկանց սրտերում՝ խաղաղություն եւ բարօրություն բերելով աշխարհին, իմաստություն քաղաքական գործիչներին՝ պետական ու հասարակական կյանքը կարգավորելու եւ բարեկեցության առաջնորդելու պատասխանատվության մեջ: Աղոթենք պատերազմում վիրավորված մեր զավակների առողջության, գերիների եւ անհայտ կորածների վերադարձի, մեր զոհված քաջորդիների եւ համավարակից մահացածների հոգիների հանգստության համար՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքի մխիթարությամբ. «Ես իսկ եմ հարություն եւ կյանք. ով հավատում է Ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի» (Հովհ. 11. 25): Թող Սուրբ Զատկի հուսառատ ավետիսը հայրենաշեն երազների իրագործման զորությունը պարգեւի աշխարհասփյուռ մեր ժողովրդին: Եվ թող Հարության արշալույսով զարդարվի երկնակամարը մեր ազգային-եկեղեցական կյանքի, եւ խաղաղ ու ապահով մնա մեր հայրենիքը՝ Հայաստան ու Արցախ աշխարհը, հավատքով ամուր, սիրով ու միասնական՝ մեր ժողովուրդը, այսօր եւ միշտ եւ հավիտյան. ամեն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Ավագ շաբաթվա արարողությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



Ոտնլվայի կարգը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 1-ին՝ Ավագ հինգշաբթի, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Տրդատ բաց խորանին կատարվեց Ոտնլվայի արարողությունը: Աղոթքների ընթերցումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց ներկա բարեպաշտ ժողովրդին, ապա, Աստվածորդու օրինակով ծունկի գալով, շարականների երգակցության ներքո լվաց եւ յուղով օծեց մի շարք հայորդիների ոտքեր:

Նրանց թվում էին Մայր Աթոռի միաբաններ Մաղաքիա վրդ. Ամիրյանը եւ Հուսիկ աբդ. Սմբատյանը, արցախյան երկրորդ պատերազմի մասնակիցներ մայոր Ստեփան Ալեքսանյանը եւ սերժանտ Արթուր Իգիթյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սան Նարեկ ուրա-



կիր Մաթոսյանը, «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի աշակերտներ Սարո Արթենյանը եւ Նորայր Պետրոսյանը, արցախյան պատերազմում զոհված եւ անհայտ կորած քաջարի հայորդիների զավակներից Նարեկ Աբրահամյանը, Ավետիք Վարդանյանը, Լեւոն Մարտիրոսյանը եւ Սահակ Անդրեասյանը, Մայր Աթոռի «Քյուրքչյան» երեխաների աջակցության կենտրոնի սան Սամվել Ադոյանը, ինչպես նաեւ այլ մանուկներ՝ Միեր Կոնդյանը, Դավիթ Կուզիկյանը եւ Դավիթ Թադեւոսյանը:

Արարողությունն ամփոփվեց Ավետարանի ընթերցմամբ եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի աղոթքով, որից հետո օրհնված յուղը բաժանվեց ներկա հավատացյալներին:

Սուրբ Հարության Ճրագալույցի Պատարագը Ս. Գայանե վանքում

Ապրիլի 3-ին՝ Ավագ շաբաթ օրը՝ երեկոյան, Ս. Հարության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջնորդությամբ Մայր Աթոռի միաբանությունը Ճրագալույցի Պատարագին մասնակցեց Ս. Գայանե վանքում: Պատարագիչն էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էր Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Արմեն Սարգսյանը, ինչպես նաեւ՝ Մայր Աթոռի բարերարները:

Մինչ Պատարագը կատարվեց Ճաշու երրորդ ժամերգությունը, կարդացվեցին սուրբգրային տարբեր ընթերցվածքներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ ընթերցեցին Դանիել մարգարեի թուղթը:

Սրբազան արարողության ընթացքում Արշակ սրբազանն անդրադարձ կատարեց Հիսուս Քրիստոսի Հարության խորհրդին՝ ի մասնավորի նշելով. «Քրիստոսի հարությունը վեմն է մեր հավատքի: Առանց հարության հրաշքի՝ չէր կարող իմաստ ստանալ Քրիստոսի զոհաբերությունը՝ չարչարանքները, խաչելությունն ու մահը: Մթագնած երկնքում բոցավառվող արեւի պես է ճառագայթում «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» ավետիսը՝ բարի լուրը, որ դարեր շարունակ վերափոխում է մարդկության կյանքը:

Քրիստոսի անձնուրաց հետեւորդ, հեթանոսաց առաքյալ Պողոսը, առանց երկիմաստության, բովանդակազուրկ է համարում քրիստոնեական հավատքը՝ առանց Հարության հրաշքի ճանաչման: «Եթե Քրիստոս հարություն չի առել,– ասում է նա,– ապա ընդունայն է մեր քարոզությունը, ընդունայն է նաեւ ձեր հավատքը» (Ա Կորնթ. ԺԵ 14)»: Խորապես հավատալով Քրիստոսի հարությանը եւ դրանով մեր փրկությանը՝ նա գոչում է. «Ո՞ւր է, մա՛հ, քո հաղթությունը, ո՞ւր է, գերեզմա՛ն, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55)»:

Ապա սրբազան հայրը, անդրադառնալով Հարության նկատմամբ թերահավատություն եւ մերժողական վերաբերմունք ցույց տվող մարդկային մտածումներին, տրամախոհական միջոցով ի դերեւ մատնեց դրանց գոյության հիմքերը՝ ընդգծելով. «Այո՛, քրիստոնյաներն աներկբա հավատում են, որ Քրիստոս հարություն է առել: Հավատում են, որ Քրիստոսի հարությունը ոչ միայն միստիկական, այլեւ պատմական իրողություն է:

➥ էջ 3

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

4 ապրիլի

Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանսուա-Քսավիե Բելամիին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրախորհրդարանի պատգամավոր Ֆրանսուա-Քսավիե Բելամիին եւ պատգամավորի գործընկեր Ժիսլեն Ֆրնաքվիլին՝ ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ժոնաթան Լաքոտի ուղեկցությամբ: Նույն օրը՝ առավոտյան, ֆրանսիացի հյուրերը Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում ներկա էին գտնվել հայրապետական ս. Պատարագին:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերեց հյուրերին, որոնք հայ ժողովրդի համար նվիրական՝ Սուրբ Հարության տոնի այս օրը գտնվում են Հայաստանում: Հանդիպման առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին եւ բարեկամ ժողովրդին՝ բոլոր ժամանակներում ծանր եւ դժվարին օրերին Հայաստանին օժանդակելու եւ զորակցելու համար: Հայոց Հայրապետը հույս հայտնեց նաեւ, որ բարեկամ երկրների զորակցությունը կնպաստի տարածաշրջանում իրավիճակի կայունացմանը եւ արդարության վերականգնմանը:

Այնուհետեւ տիար Ֆրանսուա-Քսավիե Բելամին շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ զատկական բարեմաղթանքների եւ օրհնության համար, եւ ընդգծեց, որ ինքն առաջին անգամ է այցելում Հայաստան եւ մեծ պատիվ է համարում լինել հինավուրց քրիստոնեական երկրում, որի ժողովուրդը Հարության հաղթական արժեքների կրող է:

Եվրախորհրդարանի պատգամավորն անդրադարձավ այցի նպատակներին՝ ծանոթանալ հետպատերազմյան իրավիճակին, առկա խնդիրներին, մասնավորապես՝ Արցախի հայկական հոգեւոր-մշակութային արժեքների պահպանության հարցերին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հանգամանորեն ներկայացնելով արցախյան երկրորդ պատերազմի պատճառած վնասները եւ առկա մարտահրավերները, հույս հայտնեց, որ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիան եւ

դրանից բխող մնացյալ երեւույթները կարժանանան միջազգային հանրության եւ Եվրախորհրդարանի պատշաճ արձագանքին:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ սուրբ Հարության տոնին աղոթք է բարձրացրել աշխարհում խաղաղության հաստատման համար, մեր երկրի եւ մեր ժողովրդի համար, որպեսզի այս ծանր վիճակից կարողանա դուրս գալ՝ Հարության խորհուրդն աչքերի առջեւ ունենալով, ապավինելով Աստծուն, նախնյաց հավատքին, որ դարեր շարունակ մեզ դուրս է բերել բոլոր դժվարին իրավիճակներից եւ օրհնությունն ու ողորմությունն ավելացրել հայոց կյանքում:

Ավագ շաբաթվա արարողությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում



➡ էջ 2

Հավատում են, որ Քրիստոս, հարություն առնելով, մարդկանց եւս հարություն առնելու շնորհը պարգեւեց. «Ես եմ հարությունը եւ կյանքը,– ասում է Նա,– եթե մեկը հավատա ինձ, անգամ եթե մեռնի, կապրի» (Հովհ. ԺԱ 25)»:

Արշակ սրբազանը նաեւ անդրադարձ կատարեց վերջին տարում Հայոց աշխարհին պատուհասած պատերազմին՝ նշելով. «Այսօր հազարավոր նվիրական զոհերի գերեզմանների առջեւ, անվերականգնելի կորուստների ցավերով համակված, ինչպե՞ս ձայնակից լինենք Պողոս առաքյալին եւ ասենք. «Ո՞ւր է, մա՛հ, քո հաղթությունը»:

Մեր երազանքները խորտակված են թվում, ապրածը՝ իմաստազրկված, հազարավոր ընտանիքներ՝ սրտաբեկված, անհուսությամբ մշուշված է ապագան, եւ կարծեք, թե կյանքը վերածվել է անզատիկ մի պահեցողության: Ինչպե՞ս, ինչպե՞ս ճեղքել մշուշոտ խավարը: Գիշերը ցերեկ է դառնում, բայց մեր գիշերվա վախճանը, թվում է, չկա: Մոռացե՞լ է մեզ արդյոք Աստված, թողել բախտի քմահաճույքի՞ն, թե՞ ժամանակ չունենք մենք Աստծո համար: «Արդ,– ասում է Պողոս առաքյալը,– հեռացրե՛ք ձեզանից հին մարդուն եւ նո՛ր մարդ դարձեք»: Փրկչի հարությանը հավատացող «նոր մարդուն» խորթ են նյութապաշտությունն ու եսասիրությունը: Նա ժամանակը չափում է հավերժության կշիռքով, աղետն ու հիվանդությունը նրա համար փորձություն են, իսկ ձախորդությունը՝ փորձառություն՝ նոր հաջողության ձգտելու համար:

Արդ, լինենք Հարության հանդեպ անշրջելի հավատքով զինված «նոր մարդ»՝ երկինք ուղղված վճիտ հայացքով, ապագայի հանդեպ վստահությամբ եւ խավարի դեմ մաքառելու վճռականությամբ»:

Իր քարոզի ավարտին Արշակ սրբազանը եւս մեկ անգամ աղոթք վերառաքեց հարություն առած Փրկչին՝ հայցելով, որ Նա մխիթարության բյուր շնորհներով սփոփանք բերի մեր ժողովրդի զավակներին, ամոքի վշտացյալների վերքերը, հուսալքվածներին՝ հույս, տկարներին՝ ամրություն, հիվանդներին առողջություն շնորհի եւ առատաբաշխ Իր օրհնության ներքո խաղաղություն ու բարօրություն պարգեւի համայն աշխարհին, մեր երկրին ու մեր ժողովրդին:



Հավարտ Պատարագի Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ ս. Խորան եւ ս. Սեղանի կանթեղից վառեց Տեր Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կենսատու մոմը, որպեսզի հավատացյալները հնարավորություն ունենան իրենց հարկերից ներս տանելու հարուցյալ Աստվածորդու կենարար լույսը:

Պատարագի սրբազան արարողությունից հետո Մայր Աթոռի միաբանությունը եւ ՀՀ նախագահը մեկտեղվեցին Վեհարանում, ուր, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, կատարվեց Սուրբ Հարության տնօրհնեք:

Սուրբ Հարության տոնի Պատարագը Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում

Ապրիլի 4-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Սուրբ Հարության տոնը: Այս առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը սուրբ եւ անմահ Պատարագ մատուցեց Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Սրբազան արարողությանը Վեհափառ Հայրապետին որպես առընթերականեր սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանը եւ Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու Վազգեն եպս Միրզախանյանը:

Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը համայն հայությանը հղեց հայրապետական իր պատգամը՝ փոխանցելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» հրեշտակաբարբառ կենսանորոգ ավետիսը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գահակալների ավանդը Մեծ եղեռնի նահատակների հիշատակի հավերժացման գործընթացում

Սկիզբը՝ թիվ 6

Հայ ազգը երկնածիր ու պայծառամիտ իր այս Կաթողիկոսին՝ Վազգեն Վեհափառին է պարտական նաեւ Հայոց ցեղասպանության փաստի բարձրաձայնման, միջազգային հնչեղության եւ ճանաչման գործընթացի սկզբնավորման համար: Այսպես, եղեռնի 50-ամյակի առթիվ Վազգեն Առաջինը 1964 թ. սեպտեմբերի 24-ին նամակ հղեց Հռոմի Պողոս Զ Պապին, այնուհետեւ նույնաբովանդակ նամակներ ուղարկեց նաեւ Մոսկվայի եւ Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիին, Քենթրբերիի Արքեպիսկոպոս եւ Համայն Անգլիայի Միտրոպոլիտ Մայքլ Ռեմզիին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտոր, պատվելի Վիսսեր դ'Հուֆտին: Հռոմի Պողոս Զ Պապին ուղարկված նամակում կարդում ենք. «Նորագույն պատմության մեջ առաջին ցեղասպանության մեծ ոճիրն էր, որ կատարվեց: Նահատակված հայ ժողովրդի միակ մեղքն էր, որ նա կամեցել էր այս աշխարհի վրա ապրել իբրեւ քրիստոնյա եւ ազատ ազգություն:

Մենք, իբրեւ Հայրապետ Հայ Եկեղեցու, Մեր խղճի պարտքը նկատեցինք հատուկ մի կոնդակ գրի առնել, 17 օգոստոս 1964 թվակիր, նվիրված Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի այս մեծ ողբերգության հիսնամյա տարելիցին, 1965 թվականը հռչակելով սուգի եւ աղոթքի տարի:

Այսու Ձերդ Սրբության եւ համայն Կաթողիկե Ս. Եկեղեցու բարձր ուշադրությունը հրավիրում ենք սույն տարելիցի վրա, խորհելով, թե առաջնորդված քրիստոնեական գութի եւ արդարության զգացումից, պիտի կամենայիք առաջիկա տարի ապրիլ 24-ի օրը Ձեր եւ Ձեր մեծ Եկեղեցու աղոթքը միացնել մեր աղոթքներին՝ երկու միլիոն նահատակ քրիստոնյա հայերի հոգիների խաղաղության համար»:

1965 թ. ապրիլի 24-ին, Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի կապակցությամբ, աշխարհասփյուռ հայության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ հայ ազգին պատուհասած աղետի ականատեսներ ու նրանց զավակներ, մեծաթիվ ուխտավորներ ներկա եղան Մայր Աթոռում կազմակերպված հիշատակի արարողություններին: Հիշատակի արարողություններին իրենց մասնակցությունը բերեցին ՀՍՍՌ մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դալլաքյանը, խորհրդահայ մշակույթի երեւելի ներկայացուցիչներ Մ. Սարյանը, Պ. Սեւակը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Առաքելյանը, Կ. Զարյանը, Լ. Խաչիկյանը, Ա. Ղարիբյանը, Ա. Աբրահամյանը, Բ. Առաքելյանը, Կ. Ղաֆադարյանը, Վ. Հարությունյանը, Ռ. Իսրայելյանը, Ալ. Հարությունյանը, Գ. Էմինը եւ ուրիշներ: Ամենայն Հայոց Վազգեն Առաջին Կաթողիկոսը մատուցեց սուրբ եւ անմահ Պատարագ, կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ նվիրված հայ ժողովրդի հավաքական մարտիրոսագրության հիսնամյակին, ապա Մայր տաճարի հյուսիսային կողմում տեղի ունեցավ Մեծ եղեռնի նահատակների հուշարձանի հիմնարկեքի արարողություն: Երեկոյան Վազգեն Առաջինը, իրեն ուղեկցող բարձրաստիճան հոգեւորականների թափորով, իր ներկայությամբ պատվեց Երեւանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնում տեղի ունեցող հանդիսավոր նիստը: Ապրիլի 25-ին Մայր տաճարում հանդիսավոր Պատարագ մատուցվեց, ապա գումարվեց հուշ-նիստ՝ նվիրված Մեծ եղեռնի հիսնամյակին:

1965 թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն Առաջին Կաթողիկոսը, հոգեւոր դասի եւ հյուրերի ուղեկցությամբ, Մայր տաճարի հյուսիսային կողմում հանդիսավորապես բացեց Մեծ եղեռնի նահատակների հուշարձանը, որի հեղինակն է նշանավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը: Հուշարձանի քարե պատվանդանի վրա գրված է. «Խաչքար աղոթքի եւ ուխտի, ի հիշատակ 1915 թվի ապրիլյան եղեռնի հայ նահատակների»: Հուշարձանի երկրորդ երեսի վրա՝ աղեղնաձեւ քարե վահանի մեջ, փորագրված են հայ ժողովրդի արիությունը եւ ազատագրական պայքարի անշեջ ոգին արտահայտող հերոս բնակավայրերի անունները՝ Վան, Մուսա լեռ, Շապին Գարահիսար, Հաճն, Մարաշ, Եդեսիա, Զեյթուն, Սասուն եւ Սարդարապատ: Բացելով կոթողը՝ Վազգեն Առաջինը մասնավորապես ասաց. «Այս տարի՝ ապրիլի 24-ին, Մենք օրհնեցինք այս հողը, որպեսզի այստեղ մարմին առնե կոթող մը, նվիրված 1915 թվականի հայոց Մեծ եղեռնի զոհերու հիշատակին: Ահա՛ այդ կոթողը, խորհրդանիշը հայոց վշտին, խորանը մեր աղոթքին, վեմը մեր ուխտին: Դիտեցե՛ք զայն, խաչքարերու համախումբ հորինվածք մըն է ան, որ կապրի, կշարժի եւ դեպի երկինք կտանի վիշտը ամբողջ ժողովուրդի մը, որ մեզի հետ կբաժնե համայն մարդկությունը, որովհետեւ անոր ծոցին մեջ, հիսուն տարիներ առաջ, հնարավոր դարձավ պատմության մեծագույն ողբերգություններեն մին, առաջին ցեղասպանությունը մեր դարուն:

➥ էջ 5, 7

Մուշեղ Գալշոյան

Սկիզբը՝ թիվ 3–6

Մ. Գալշոյանի հայրենակից Գեւորգ Հակոբյանի պատմածն է, նաեւ գրածը. «Թուրքերն այրում են Սասունի Բրդոնք գյուղը: Փրկվում է միայն քեռի Մանուկի ընտանիքը: Այսպես փրկվելն ամոթ էր: Քեռի Մանուկն իր կնոջն ու վեց երեխաներին ուղարկում է փախուստի մատնված հայրենակիցներին ձորերից ու կիրճերից փրկելու: Փրկվածներին ապահով տեղ հասցնելու համար զոհվում են նրա հինգ տղաներն ու կինը, իսկ աղջիկն արնաքամ ընկնում է այս լուրը հորը հայտնելու պահին: Քեռի Մանուկը գաղթում է Արեւելյան Հայաստան, ամուսնանում, բայց այլեւս երեխաներ չի ունենում: Երեխաների աճյունները մնացին հայրենիքի ձորերում: Օր ծերության Քեռի Մանուկը մի դույլ անարատ ձյուն ձեռքին կանգնում է կոլտնտեսության նախագահի դռանը եւ ասում. «Նախագահ, մեքենա տուր, էս ծաղիկները,— ցույց է տալիս դույլի միջի ձյունը,— տանեմ երեխեքին, էնտեղ, ուր նրանց ոսկորներն են»:

Այս սյուժեն «Մարութա սարի ամպերը» ժողովածուի մեջ կարող էր լիներ: Այդպես է գրողի ստեղծած ձգողականության դաշտի օրենքը:

Գալշոյանի ժամանակակիցները նաեւ տագնապներ ունեին, թե ինչ է լինելու նրա հաջորդ քայլը: Բայց ամեն անգամ նրա հաջորդ քայլը կայանում էր՝ շվարումի մատնելով նրան ստեղծագործական կես ճանապարհին թողնելու պատրաստ կասկածամիտներին:

Գալշոյանն այն երջանիկ գրողներից էր, որոնց թիկունքին ժողովուրդ ու բնաշխարհ կար՝ իրական մարդիկ, իրական կենսագրություններ, բերնից բերան անցնող պատմություններ: Այս նկատառումով իր հերթին վարձատրված է այն ժողովուրդը, որն իր ձայնը տեղ հասցնող գրող ունի: Նաեւ սրանով է պայմանավորված կարճ ժամանակում Գալշոյանի ձեռք բերած ժողովրդականությունը, ընդ որում՝ ոչ միայն հայրենիքում, այլեւ արտերկրի հայության մեջ:

Այսուհանդերձ, Մ. Գալշոյանի գեղարվեստական համակարգը ոչ թե ներփակ աշխարհ էր՝ միայն ազգային գրականության որոշակի ավանդույթներով, այլ ընդհանրության եզրեր ուներ դարձյալ բնաշխարհիկ ուղղվածություն ունեցող ժամանակակից արձակի հետ: Նկատի ունենք ռուսական արձակի այնպիսի ներկայացուցիչների, ինչպիսիք են Վ. Շուկշինը, Վ. Ռասպուտինը, Վ. Բելովը եւ ուրիշներ: Տարբեր են նյութը, միջավայրը, հարցադրումը, բայց երբեմն բացահայտորեն նույնն են հանրային ու կենցաղային մտահոգությունները, հողի ու մարդու հարաբերության բարոյականության դրսեւորումները: Ասածը փաստելու համար զուգահեռ գծերի վրա կարելի էր մտաբերել Գալշոյանի պատմվածքների եւ հայ գրողի տարեկից Վ. Բելովի ստեղծագործությունների որոշ պատկերներ: Որպես կարճ տեղեկանք՝ ասենք, որ Բելովի ցավը սեւահողային Ռուսաստանի, Վոլոգդայի երկրամասի ճակատագիրն էր:

Գալշոյանի «Աղորիք» պատմվածքի հերոս Խալեն առատ բերքը հավաքելու պահին, միաժամանակ այն կորցնելու ահը սրտում, մտածում է մի կերպ ընտանիքի ապրուստը հոգալու, ծայրը ծայրին հասցնելու մասին. «Հարսնուկ բոբիկ... հարսնուկ բոբիկ ու չիփլախ:— Եթե ոչ մեկին ոչ մի մազ չգնի, հարսին, ճիտքը ծուռ մնացած հարսին, Խալեն ոտից գլուխ հագցնելու է:— Ազնոն չիփլախ, Նախշուն բոբիկ ու չիփլախ:— <...> Ազնոն հասած աղջիկ է. Ազնոյին նմանապես պետք է կարգին հագցնել, ինչ հարսի համար գնեց՝ նույնը աղջկան:— Մուրդիկ բոբիկ, Քնոն բոբիկ ու չիփլախ,— դպրոց են գնում, ամոթ է,— Նխշուն բոբիկ, Սմբոն բոբիկ, Աբեթնակ... Չէ, Աբեթնակ դեռ մատմիս երեխա է, դպրոց էլ չի գնում: Պստիկ թոռների համար Խալեն սոլ չի առնի, տրեխ կկարի...»:

Նույն հոգսից ծնված ցավն է նաեւ Վ. Բելովի «Էս է...» վիպակում. «Կատերինան գողունի, որ կթվորուհիները չտեսնեն, սրբեց արցունքը: Գոնե նամակով մի հնգանոց կուղարկեմ Տանյուշկային: <...> Անտոշկային էլ շաբաթական մի երեքնոց պիտի հանես ու տաս, չնայած կերակրում են գիշերօթիկում, բայց պիտի տաս: Վալենկաներն էլ է լրիվ մաշել, ախր ծակ ոտնամանով դպրոց ուղարկել չի լինի, նոր վալենկա է պետք նրան, Գրիշկային ու Վասկային էլ մի-մի շապիկ, վաղուց եմ խոստացել, պիտի առնեմ, <...> Մարուսյային էլ ռետինե սապոգ է պետք...»:

➥ *էջ 7*

Կրակի խորհրդապատկերը Մուշեղ Իշխանի «Կրակը» ժողովածուում

Սկիզբը՝ թիվ 4–6

Իշխանի երկերի կենտրոնում մասնավորապես հայ մայրերն են՝ իրենց բարձր նկարագրով: «Դու՛ք, մամիկներ սեւազգեստ» բանաստեղծությունը հայ մայրերի հետ զրույց է, որն իր մեջ ներառում է գաղթահայության դառը ճակատագիրը, ներկա «քարուքանդ բարքերը», միեւնույն ժամանակ՝ լուսավոր ապագան:

Դուք հարենիքն եք շարժուն, մեկ-մեկ
գավառ կենդանի.
Ներկայի «Սուտ երազեն» աչքերնիդ փակ
երբ կ'անցնիք՝
Դուք կ'ապրիք լոկ ամեն ժամ մշտարթուն
կյանքն անցյալի
Մեր սարերուն, մեր ջուրին եւ մեր լուսնին
բացառիկ: (էջ 78)

Ստացվում է, որ պատմական հայրենիքը կերպավորվում է արտացոլանքի գոծառույթ ունեցող աչքեր, ջուր եւ լուսին նշանների միջոցով, որոնց ընտրությունը, կարծում ենք, պատահական չէ:

Պարզ է, որ հայ մայրերի տառապանքներն Իշխանը զուգակցում է ողջ հայ ժողովրդի չարչարանքների հետ: Մայրերը դիտվում են ոչ միայն իբրեւ զոհեր, այլեւ «անողոք պահակները» ազգային հնավանդ արժեքների, որի արտահայտությունը «տոհմային լույս» նշանն է: Իսկ հայ մայրերի՝ Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ ունեցած անսահման սիրո ու նվիրումի նկարագրությամբ՝ գրողը մատնանշում է ազգի փրկության ուղին: Եվ բանաստեղծության սկզբում կիրառվող «որոտացող փոթորիկ — մահաշունչ անապատ» նշանների իմաստը բանաստեղծությունն ամփոփող տողերում հակադրվում է եկեղեցում վառվող մոմերի եւ երկնքում փայլող աստղերի լույսին: Այս եւ մի քանի բանաստեղծություններում Մ. Իշխանը երեւում է իբրեւ մեծ հավատացյալ եւ քրիստոնեական դավանաբանությանը հավատքով մոտեցող արվեստագետ:

Գրողի անտարակույս հավատի, հայ ժողովրդի անմահության եւ հավերժական գոյության երաշխիք է հայ մամիկների օրհնանքի խոսքը, որը թեպետ իր անմիջական արտահայտությունը չի գտնում բանաստեղծության մեջ.

Բարի՜, բարի՜ հայ մայրեր, ահա կ'իյնանք
ձեր առջեւ,
Օրհնեցեք մեզ սրտագին ձեր իսկ ձեռքով
թառամող,
Որ չմարի կես ճամբուն աստղ ու
հավատք մեր վերեւ
Եվ ձեզի տանք, ձեր մահվան, հայ
աշխարհեն ափ մը հող... (էջ 78)

Եվ եթե հեղինակը ժողովրդի հավերժական գոյության գաղափարն իրագործված է տեսնում հայ մայրերի օրհնանքի մոգական խոսքում, ապա «Անունի մը համար» երկում քնարական հերոսը կրկին զգում է մոգական խոսքի կարիքը, բայց այս անգամ անձնական-անհատական ցավերը բուժելու նպատակով, «....Իբրեւ Հաղթերգ Ունայնության դեմ նետված» («Անունի մը համար», էջ 59): Հեղինակն աշխատում է ցույց տալ տարագիր մարդու ներաշխարհի վրա թողած մայրենիի հրաշագործ ազդեցությունն ու արձագանքը՝ հայահունչ կրակ-խոսքի մեջ տեսնելով ապրելու, գոյատեւելու միակ հնարավորությունը եւ կյանքի զարգացումը (Սփյուռքի այս նույն զգացողությամբ տարագիր այլ հեղինակներ եւս, ինչպես Վ. Թեքեյանը եւ Վ. Շուշանյանը, իրենց խռովահույզ «ներքին դաշտանկարի» (Վ. Շուշանյան) մասին գրում են գրեթե նույնը: «Կը բավեր, որ ընկեր մը հայրենական երգ մը երգեր, որպեսզի հոգիս կորսնցներ իր հավասարակշռությունը: Ու ահա տարագիր հայրենիքը կը վերադառնար աքսորական արքայի մը պես ու կը վերահաստատեր իր թագավորություն»,— գրում է Վ. Շուշանյանը (*Վազգեն Շուշանյան, Ներքին դաշտանկար, Երեւան, 1995, էջ 19*): Բանաստեղծական հետեւյալ պատկերը «կեանքէն պարտուած» մեկ այլ մտավորականի՝ Վ. Թեքեյանի հոգու պատկերն է. «Բառ մը յաճախ բաւ է հորիզոններ բանալու, // Ճառագայթ մը անցեալէս, կըլլայ լոյսը ներկային»):

Գրականագետ Վ. Գաբրիելյանը, խոսելով Մ. Իշխանի «Կրակը» ժողովածուի առանձնահատկությունների մասին, բացահայտում է կրակի խորհրդանշական տարբեր իմաստները՝ կրակը որպես տան, օջախի պահպանման խորհրդանիշ, որպես ջերմացուցիչ օտար սառնության մեջ, որպես բորբոքիչ անորոշ հուսալքության պահերին, կորցրածը վերագտնելու ճանապարհը լուսավորող ջահ, սիրո եւ կյանքի, հույսի, հավատի ու մաքառման (*Վազգեն Գաբրիելյան, Հայաստանի տարագիր բանաստեղծը, Դիտարկումներ գրականության ճանապարհին, Երեւան, 2018, էջ 127*): Մեր կարծիքով՝ գրականագետի մատնանշած կրակի բոլոր իմաստներն ակնարկվում են Ժողովածուն բացող «Անունի մը համար» երկում, որը մի տեսակ մուտք է դառնում ժողովածուի բանաստեղծական աշխարհը ներթափանցելու: Արդեն իսկ առաջին բանաստեղծության մեջ առկա պատկերները՝ շեն տան հետ համեմատվող «հայահունչ մեկ բառ» — «արյունիս մեղեդի» — «լույսի մատյան» — «արյունող վշտերուն շոյանք եւ օրոր» — «տենդեն այրած ջիղերուն նոր ավիշ» — «արյունոտ խենթությամբ պայքար» համեմատություններով, արտահայտում են կրակի գլխադիր գաղափարները եւ խորհրդանշական իմաստները, որոնք մասնավոր դրսեւորումով կամ նշանաշարերով ի հայտ են գալիս ժողովածուի առանձին բանաստեղծություններում եւ դառնում ժողովածուի էությունը:

Հաշվի առնելով Իշխանի ստեղծագործության մեջ խոսքի մոգության դրսեւորումները՝ կարելի է ասել, որ նրա բանաստեղծությունները պահպանում են առասպելական մտածողության կնիքը: Դրանք հիշեցնում են կրոնադիցաբանական պատկերացումներում հաստատված խոսքի՝ իրերի վրա իշխանություն ձեռք բերելու գաղափարը: Առասպելական կառույցի նվազագույն միավորը (միֆեմ) խոսքն է, որը հանդիպում է ինչպես Աստվածաշնչում («Աստված ասաց, թող լինի լույս, եւ եղավ լույս»), այնպես էլ հունական դիցաբանության կրակի աստծո՝ Հեփեստոսի (հռոմեական դիցաբանության մեջ՝ Վուլկան) մասին պատմող առասպելում. «Զարմանահրաշ փուքսեր են դրանք. գործի են ընկնում առանց ձեռքերի օգնության. Հեփեստոսի խոսքին են ենթարկվում: Մի խոսք կասի նա, եւ գործի կանցնեն փուքսերը՝ վառ բորբոքելով հնոցի կրակը» (*Ն.Ա. Կուն, Հեփեստոս, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, էջ 77*):

Շարունակելի

Մարինե ՂԱԶԱՐՅԱՆ
ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի դասախոս

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1830–1892)

Սկիզբը՝ 2020-ի թիվ 18–24, 2021-ի թիվ 1–6

ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԱՐՁԱԿԸ

Փորսուղին Ավագը թեեւ օժտված է բնավորության անհատական գծերով, բայց եզակի չէ եւ հասարակ անվան վերածված հավաքական կերպար է: Անպիտան մարդու այն տեսակն է նա, որ սողոսկում է իրականության բոլոր ոլորտները, ձգտում է կորզել կյանքից ինչ կարող է՝ առանց հանրությանը որեւէ օգուտ տալու: Նա եւ նմաններն են խոչընդոտում կյանքի առաջընթացը, չորացնում, փչացնում, ապականում ամեն ինչ:

Պատմվածքի վերջում Նոր Նախիջեւանի՝ Ռոստովից հետամնացության հեղինակային հիմնավորումը՝ որպես գեղարվեստական ընդհանրացում, այսօր էլ ունի արդիական հնչեղություն. «Դու ինչո՞ւ ես զարմանում, որ Նախիջեւանը աճելու, ծաղկելու փոխարեն՝ քանի գնում՝ բորբոսնում, թառամում է, փչանում քո ձեռքի մեջ: Ասա մեկ տեսնեմ, տարին տասներկու ամիս դու որի՞ խելքով ես կառավարվում — Փոռսուխ Ավագների: Ովքե՞ր են քո քաղաքդ կառավարողները — Փոռսուխ Ավագները. ովքե՞ր են քաղաքի վարչությանդ ձայնավորները — Փոռսուխ Ավագները. ովքե՞ր են քո դպրոցներիդ հոգաբարձուները — Փոռսուխ Ավագներ:

Հետո՞, ի՞նչ զարմանալու բան կա, որ ամբողջ քաղաքը դարձել է մի 5–6 հազար Փոռսուխ Ավագներով լցված աղբանոց...» (*նույն տեղում, էջ 555*):

ՎԻՊԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ

Պատկանյան վիպասանն առանձնապես չի մտահոգվել իր վեպերի «ճարտարապետական հյուսվածքի» կատարելությամբ եւ իր թելադրանքով գործող գաղափարակիր հերոսների արարքների գեղարվեստական համոզչությամբ. գեղագիտական բարձր իդեալի դիրքերից նա, փաստորեն, ստեղծել է վիպական գործողություններում միմյանց հարաբերվող հերոսների եւ «հակահերոսների» (*այս մասին հանգամանորեն տես Մակարյան Ալ., Սողոյան Ա., Ռափայել Պատկանյանի վիպաշխարհը, «Վէմ» համահայկական հանդես, 2016, թիվ 3 (55), էջ 85–118*) տիպեր, որոնք գործում են միեւնույն երկում, իսկ դրանց նմանակները՝ մյուս ստեղծագործություններում: Այսպես, Պատկանյանի կերպավորած իդեալական հայի կերպարներ են Միքայել Վայելչյանը՝ «Ես նշանած էի», Սուսաննան կամ Շուշանը՝ «Փառասեր», Վարդան Հուսիկյանը կամ Հուսկանյանը եւ Եկատերինան կամ Կատյան՝ «Տիկին եւ նաժիշտ» վեպերում, իսկ բացահայտ «հակահերոս» կարող են համարվել Հարություն Ալթմազովն ու իր հայրը՝ նույն «Փառասեր», իսկ Սոֆյան ու իր հայրը՝ հաշտարարանցի մոսկվաբնակ, ինքնաբավ մեծահարուստ, հայատյաց Ասատուր աղան՝ «Տիկին եւ նաժիշտ» վեպերում (*այս երկերի վեպ թե վիպակ լինելու տեսական բանավեճին անդրադառնալու փոխարեն՝ նախընտրում ենք դրանք դիտարկել հեղինակային բնորոշմամբ*):

Հեղինակն իր արձակ էջերում նույնպես ընթերցողի առջեւ բարձրացրել է ժամանակի՝ իրեն մտահոգող լուսավորական, մարդկային-բարոյական ու սոցիալ-տնտեսական եւ հայ մարդու բարոյական նկարագրի եւ ազգային ճակատագրի հարցերը:

«Ես նշանած էի» երկն առաջինն է Պատկանյանի վեպերի շարքում: Դեպքերը կատարվում են 1850-ական թթ. Պետերբուրգում, որտեղ ուսանող էր գործող հերոս *Միքայել Վայելչյանը*: Ի դեպ, վեպը 1880 թ. «Փորձ» ամսագրում տպագրվել է հենց այս ստորագրությամբ, որը հեղինակի ծածկանուններից մեկն է: Վերնագրին հաջորդող «Ճշգրիտ անցք իմ հիշատակարանից» գրառումը հավաստումն է դեպքերի, ինչպես եւ պատումը վարող հերոսի կերպարում առկա ինքնակենսագրական տարրերի վավերականության:

Իրական-վավերական են ուրվագծվող պետերբուրգյան չարաշուք ձմեռվա, սովի ու համաճարակների, հաճախադեպ մահերի ու հարյուրավոր թաղումների եւ տարբեր հաստատություններում սովորող աղքատ ու քաղցած հայ ուսանողների դժվարին կյանքի պատկերները: Ահա ինքնակերպավորվող Միքայելը, որն սկզբից եւեթ առանձնանում է որպես առանցքային դերակատար, հյուսում է վիպական հանգույցն ու հայտնվում գործողությունների կենտրոնում, հաշտարխանցի (աստրախանցի) Տեսնատա մականունով Ալեքսանը՝ «գործնական» վարքագծով, նկարելու թուղթ ու մատիտ չունենալու դժգոհությունից ու ձանձրույթից ցուրտ սենյակում ձեռքերը գլխատակին պառկած, առաստաղից թքով «տառաքաղ» վար բերել փորձող գեղարվեստի ուսումնարանի սան Հովհաննեսը...

Միքայելը Մարիին հանդիպում է պատահաբար՝ «ներքին ձայնի» թելադրանքով, սիրահարվում է ու կամավոր ենթարկվում դիպվածների փորձությանը: Մեծ Քարե կամրջի վրա ամենից աղքատիկ թաղման թափորն էր տեսել Միքայելը՝ անշուք մի դիակառք՝ վրան Մարիի նորոգ հանգուցյալ մոր դագաղը, երկու ուղեկից ռուս պառավ ու եվրոպական արտաքինով միայնակ սգավոր մի գեղեցկուհի, որ անել վշտի մեջ ուներ օգնության ու մխիթարության կարիք: Առաջադրվում է երկի գաղափարական հիմնահարցը՝ նման ծայրահեղ իրավիճակում ինչպե՞ս իրեն պիտի դրսեւորեր իդեալական հայը:

Անծանոթ սգավոր գեղեցկուհուն Միքայելը վերաբերվում է հարազատի պես ու ինքնաբերաբար դառնում ցավակից հուղարկավոր: Լյութերականների գերեզմանոցի ճանապարհը ճշտելուց հետո՝ դիասայլը կտրուկ շրջելու պահին, սահելով ընկնող դագաղը կանգնեցնելիս վիրավորվում է նրա ձեռքը: Մարին վերքը կապում է իր թաշկինակով, որի եզրին ասեղնագործված էին M. V. լատինական տառերը, որոնք, Միքայելի եւ Մարիի անուն-ազգանունների սկզբնատառերին համընկնելուց բացի, ունեին «մահ թույնից» նշանակությունը: Ուրեմն՝ չարաբաստիկ կանխատեսումը վիպական գործողությունների ավարտին պիտի իրականանար:

Հնավաճառից գնած գրասեղանի գզրոցում հսկայական հարստություն գտած Միքայելն օրինապահ քաղաքացի էր. ոչինչ չէր խանգարում, որ նա իր գնած սեղանի փակ դարակից հայտնաբերած գանձը միանձնյա տնօրիներ սեփականության իրավունքով, բայց նա ազնիվ մղումներով գերադասում է հարստությունը հանձնել քաղաքապետարանին եւ օրինականորեն ստանալ նրա քառորդ մասը միայն:

Այդ առաքինի երիտասարդն այդքանով էլ էր հարուստ, հանուն Մարիի նա զոհաբերել էր շատ բան ու նվաճել նրա սերը: Աղջիկն ինքն էր շտապեցնում իրենց ամուսնությունը:

➥ էջ 8

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գահակալների ավանդը Մեծ եղեռնի նահատակների հիշատակի հավերժացման գործընթացում

➥ էջ 3

Այս խաչքարը դեպի երկինք կտանի նաեւ մեր աղոթքը մոտ երկու միլիոն մեր նահատակ զավակներուն հոգիներու խաղաղության եւ լուսավորման համար: Անոնք գերեզման իսկ չունեցան այս աշխարհի վրա, սակայն մեր սրտերը կվկայեն, թե «նոցա է արքայութիւն երկնից»...

Այս օրեն սկսյալ սրբավայր մըն է այստեղ, նվիրված մեր ողբերգական անցյալին, մեր զոհված եղբայրներու եւ քույրերու հիշատակին, մեր ժողովուրդի ինքնապաշտպանության հերոսամարտերուն, մեր ազգային ուխտին»:

Այս իրադարձությունն ուշագրավ է նաեւ այն առումով, որ Նահատակաց հուշարձանի բացման արարողությունը զուգադիպեց Վազգեն վեհափառի գահակալության տասնամյա հոբելյանին, ուստի ներկա էին նաեւ այդ առիթով Հայաստան ժամանած քույր Եկեղեցիների գահակալները: Հավելենք, որ մինչ այդ պահը Մեծ եղեռնի նահատակների հիշատակին նվիրված միակ հուշարձանը՝ մատուռի տեսքով, 1950-ական թվականներին կառուցվել էր Անթիլիասում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի տարածքում, ուր ամփոփվել էին Դեր Զորից բերված զոհերի աճյուններ:

Փաստորեն, 1964 թ. օգոստոսի 17-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի հրապարակած սրբատառ կոնդակը, որով առաջիկա 1965 թ. հռչակվում էր Հայոց Եկեղեցու եւ համայն հայ ժողովրդի համար ազգային սգի եւ աղոթքի տարի, նախորդեց Հայոց պատմության շրջադարձային կարեւոր իրադարձությանը. 1965 թվականից Խորհրդային Հայաստանում սկիզբ դրվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը ապրիլի 24-ին պաշտոնապես նշելու ավանդույթին, եւ հայ ազգի մեծագույն ողբերգությունը վերջապես դադարեց արգելված թեմա լինելուց: Այդ գործում անգնահատելի է Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար Յակով Նիկիտայի Զարոբյանի ներդրումը. հայրենասեր մեծ գործիչը վճռական քայլեր ձեռնարկեց հայ ժողովրդին պատուհասած ողբերգության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումները պատշաճ կազմակերպելու եւ անցկացնելու համար: 1965 թ. փետրվարին Հայկական ՍՍՀ կառավարությունը պատրաստեց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի կառուցման որոշման նախագիծը, իսկ Հայաստանի կոմկուսի կենտկոմը շուտով հաստատեց այն: Հուշարձանի բացման պաշտոնական արարողությունը ծրագրված էր 1967 թ. ապրիլի 24-ին, սակայն տեղափոխվեց Հայաստանի խորհրդայնացման օրը՝ նոյեմբերի 29-ին: Եվ ահա 1967 թ. նոյեմբերի 29-ին Ծիծեռնակաբերդի բարձունքում հանդիսավոր արարողությամբ բացվեց Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը, որը նաեւ հայ ազգի վերածնունդը խորհրդանշող եւ միավորող եզակի հուշարձան է:

1975 թ. ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի 60-ամյա տարելիցին, առաջին անգամ ժողովրդի հետ միասին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր բարձրացավ Հայաստանի ղեկավարությունը՝ ՀԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի գլխավորությամբ: Այդ օրն առաջին անգամ հայտարարվեց լռության րոպե: Կ. Դեմիրճյանն իր հեռուստաելույթում դատապարտեց Օսմանյան Թուրքիայի իրականացրած զազրելի ոճրագործությունը՝ տալով քաղաքական գնահատական եւ այն որակելով որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, մտցվեց ապրիլքսանչորսյան «Լռության րոպեն»:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ղեկավարման տարիներին Ծիծեռնակաբերդի բարձունքում կառուցվեց թանգարան, որը հետագայում անվանվեց Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ: Թանգարանը բացվեց 1995 թ. ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի 80-րդ տարելիցի օրը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Մեծ եղեռնի նահատակների հիշատակի հավերժացման մտայնությամբ ձեռնարկված միջոցառումներն իրենց լրմանը հասան եւ պսակվեցին Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողությամբ: 2015 թ., Մեծ եղեռնի 100-րդ տարելիցի առթիվ, ապրիլի 23-ի երեկոյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ս. Տրդատի բաց խորանում, 400 տարվա ընդմիջումից հետո, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց *սրբադասման* կարգ. Հայոց Եկեղեցու սրբերի շարքին դասվեցին Հայոց ցեղասպանության անմեղ զոհերը:

➥ էջ 7

Նրանք մնում են որպես դավաճանության խարանը կրողներ

Մարդկության պատմության եւ հասարակության վերաբերյալ կան փիլիսոփայական, քաղաքագիտական, հասարակագիտական տարբեր տեսություններ, որոնք տվյալ ոլորտին բնորոշ ուղղվածությամբ են փորձում բացահայտել պատմական զարգացման բնույթը, բացատրել գործընթացներն ու օրինաչափությունները, տարբեր իրադարձությունների ու երեւույթների պատճառահետեւանքային կապերը եւ այլն: Այս համակարգում իր ուրույն դերակատարումն ու տեղը (լինի դրական թե բացասական) ունի անհատը: Մարդն իր իսկ փոքրիկ «պատմությունն» է, իր կերտած կենսագրությունը, իր անցած ուղին, թողած հիշատակը: Եվ այս առումով, կարծում ենք, ամենադժբախտը (բառի բուն իմաստով) նա է, ում անունը պատմության էջերում «սեւ» տառերով է դրոշմված, ում նույնացնում են չարիքի եւ դավաճանության հետ, ում անունը անեծքով շաղախված են արտաբերում... Իսկ այդպիսիք, ցավոք, քիչ չեն մարդկության պատմության մեջ... Երբ ասում ենք «դավաճան», ակամայից մտաբերում ենք Հուդային, նրա կեղծ համբույրն ու մատնությունը, 30 արծաթը... Այս մասին դեռ կխոսենք, իսկ մինչ այդ անդրադառնանք սուրբգրային մեկ այլ դրվագի՝ առաջին սպանությանը:

Աստվածաշունչ մատյանը վկայում է, որ բերկրության դրախտից արտաքսվելուց հետո Ադամն ու Եվան զավակներ են ունենում: Նրանցից Աբելը հովիվ է դառնում, իսկ Կայենը՝ հողագործ: Որոշ ժամանակ անց եղբայրներն ընծաներ են բերում Աստծուն՝ Կայենը երկրի բարիքներից, իսկ Աբելը՝ ոչխարների առաջնեկներից (հմմտ. Ծննդ. Դ 1–4): Աստված ընդունում է Աբելի ընծաները, իսկ Կայենին ու նրա նվերներին ուշադրություն չի դարձնում, քանզի վերջինս բարությամբ ու սիրով չէր զոհաբերում: Երկնային Հայրը տեսնում է այն, ինչ չի կարող տեսնել արարված մարդը. Նա քննում է սրտերն ու հոգիները, Նրա ամենազոր կամքից որեւէ բան ծածուկ չի մնում: Կայենը շատ է տրտմում, նրա դեմքը մռայլվում է: Աստված Կայենին ասում է. *«Ինչո՞ւ տրտմեցիր, ինչո՞ւ մռայլվեց դեմքդ: Չէ՞ որ եթե արդար ես զոհաբերում, բայց արդար չես բաժանում, մեղանչած ես լինում: Հանգի՛ստ եղիր, դու կարող ես մեղքից ազատվել, դու ի վիճակի ես այն հաղթահարելու»* (Ծննդ. Դ 6–7): Այսինքն՝ Աստված կարդացել էր Կայենի մտքերը եւ գիտեր նրա մտադրությունը: Եվ ահա, երբ եղբայրները դաշտ են հասնում, Կայենը՝ չար նախանձից դրդված, հարձակվում է Աբելի վրա եւ նենգաբար սպանում նրան: Աստծու հարցին՝ «Ո՞ւր է քո եղբայր Աբելը», Կայենն անամոթաբար չքմեղանում է. *«Չգիտեմ, մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ»* (Ծննդ. Դ 9): Եղբայրասպանին թվում էր, թե որեւէ մեկը ականատես չի եղել իր սարսափելի հանցանքին, եւ ինքը կարող է թաքցնել իր գործած աններելի չարիքը: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, Աստծու ամենատես աչքից որեւէ բան ծածուկ չի մնում. *«Այդ ի՞նչ արեցիր, քո եղբոր արյան կանչը երկրից բողոքում է ինձ»* (Ծննդ. Դ 10): Այս հատվածում մեկ անգամ եւս ընդգծվում է այն ճշմարտությունը, որ աշխարհում որեւէ բան գաղտնի չի մնում, վաղ թե ուշ ամենայն ինչ բացահայտվում է, նույնիսկ երկիրն ու երկինքն են աղաղակում գործված մեղքի մասին (հմմտ. Ծննդ. Դ 10)... Իսկ ի՞նչ կապ ուներ այս դրվագը դավաճանության հետ... Կայենի արարքը լոկ սպանություն չէր. ադամորդին նախ դավաճանեց ինքն իրեն, ապա՝ իր արյունակից եղբորը՝ հակադրվելով մարդուն գիշատիչ կենդանուց տարբերակող աստվածաշնորհի պատկերին. ինչպես իրավամբ նկատում է Պլատոնը, *«դավաճաններն առաջին հերթին դավաճանում են իրենք իրենց»*:

Աստված մարդուն արարեց ըստ Իր պատկերի եւ նմանության (հմմտ. Ծննդ. Ա 26–27). Ս. Գրիգոր Տաթեւացին գրում է. *«...զի մարդն Երրորդութեանն է պատկեր եղեալ որպէս ցուցաւ...»* («Գիրք հարցմանց երիցս երանեալ սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն», աշխ.՝ Ս. Արեւշատեանի, Երուսաղէմ, 1993, էջ 272–273): Ի սկզբանե *«մարդն արարւում է Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ՝ միեղէն ներդաշնակութեան մէջ իր Արարչի հետ, նա մեծարուած է գերագոյն փառքով՝ նուիրական միութեամբ աստուածային իրականութեան հետ՝ որպէս արարչութեան պսակ: Մարդու ստեղծումը միեղէն արարչական գործողութիւն է, որով արարուածը ոչ թէ օտարւում, այլ դրւում է նախախնամական եւ շնորհական միութեան մէջ իր Սկզբնապատճառի հետ»* (Մեսրոպ քհնյ. Արամեան, Միեղինութեան սկզբունքը աստուածաբանութեան մէջ, «Գանձասար» աստուածաբանական հանդէս, Երեւան, 1994, Ե, էջ 85): Այսինքն՝ եղբայրասպանության ծանրագույն մեղքով Կայենը խեղում է իր աստվածանմանությունը, ապականում Աստծու պատկերը, հետեւաբար՝ կորցնում է ամենաթանկն ու կարեւորը՝ Արարչի շնորհը, զրկվում Նրա հետ միությունից ու հաղորդակցությունից:

Գիտենք նաեւ՝ Արարիչը մարդուն օժտել է բանականությամբ եւ ազատ կամքով, որոնցով վերջինս պետք է իշխեր ողջ աշխարհին: Նույն ազատ կամքով մարդը կամ մաքրագործման ու վերելքի, կամ մեղանչումի եւ անկման ուղին է ընտրում: Ամենատես Հայրը Կայենին զգուշացնում է, որ ազատվի եղկելի մտքերից, հաղթի մեղքին, քանզի հակառակ դեպքում նրա սրտում արթնացած չարությունն ու նախանձը հանգեցնելու են աններելի արարքի: Չնայած Աստծու հորդորին՝ *«Հանգի՛ստ եղիր, դու կարող ես մեղքից ազատվել, դու ի վիճակի ես այն հաղթահարելու»* (Ծննդ. Դ 7), Կայենը չար նախանձի պատճառով հեղում է սեփական եղբոր արյունը՝ դառնալով ոճրագործ: Ըստ էության՝ մեծ ստորությունները կատարվում են նախանձից եւ ատելությունից դրդված, իսկ փոքրերը՝ վախից:

Եվ ահա, իր նմանին կյանքից զրկողն արժանանում է Աստծու նզովքին. *«Արդ, անիծյալ լինես երկրի վրա, որը բացեց իր բերանը եղբորդ՝ քո ձեռքով թափած արյունն ընդունելու համար: Դու պիտի մշակես հողը, բայց նա պիտի չկարողանա քեզ տալ իր արդյունքը»* (Ծննդ. Դ 11–12): Հողը՝ ներկված անմեղ զոհի արյամբ, վերածվում է պատժի գործիքի՝ Կայենին զրկելով իր բնական բարիքներից: Ապա՝ *«Ահ ու դողի եւ երերման մեջ պիտի լինես երկրի վրա»* (Ծննդ. Դ 12): Առաջին հայացքից թվում է, թե Աստված խիստ մեղմ պատիժ է սահմանում եղբայրասպանի համար... արդյո՞ք ողջ կյանքում ահ ու դողով ապրելը, մշտապես սարսափի մեջ գտնվելը, սեփական բնօրրանում արտաքսված ու մերժված լինելը, մարդասպանի խարանը ճակատին կրելը, ազգակիցների կողմից ատելի եւ արհամարհված լինելը մեղմ պատիժ է. դատե՛ք ինքներդ... Եվ Աստված նշան դրեց Կայենի վրա, որպեսզի որեւէ մեկը չսպանի նրան (տե՛ս U. Cassuto, A Commentary on the Book of Genesis, Jerusalem, 1961–1964, pt. 1: From Adam to Noah): Աստվածաշունչ մատյանում հստակ նկարագրված չէ այդ նշանը, սակայն դրա վերաբերյալ տարբեր տեսակետներ են առկա: Այսպես՝ մասնագետներից ոմանք կարծում են, որ Աստծու անեծքից հետո Կայենը բորոտությամբ է հիվանդանում, ուստի այդ ախտի ժանտ վերքերն էին նրա նշանը, որի պատճառով եղբայրասպանը մերժվում ու հալածվում էր բոլորի կողմից: Ըստ Թալմուդի (Հնգամատյան) առաջատար մեկնաբաններից մեկի՝ Շլոմո Յիտժակի՝ այդ նշանը, հավանաբար, Բարձրյալի անվան տառերից մեկն է եղել, որը եւ դրոշմվել է Կայենի ճակատին:

Աստված Կայենին չպատժեց՝ նրա կյանքը խլելով, այլ թույլ տվեց, որ շատ երկար ապրի՝ մշտապես սահմռկեցուցիչ երկյուղ զգալով, տեղից տեղ փախչելով եւ բոլորի ատելության դառնությունը ճաշակելով...

Կայենը հեռանում է Աստծու մոտից եւ բնակվում Նայիդ երկրում՝ Եդեմի դիմաց: Իրականում Աստված չի հալածում Կայենին, այլ նա ինքն է փախչում՝ անդադար տառապելով մահվան շնչավոր երկյուղից: Չարիք գործողը, ըստ էության, սարսափում է ճիշտ նույն հատուցումից. իր նմանի արյունը հեղողը միշտ մտածում է, որ իր արյունն էլ կթափվի մեկ ուրիշի ձեռքով (հմմտ. Ծննդ. Դ 6): Ըստ ավանդության՝ երբ Կայենը թաքնվում է Աստծուց (հմմտ. Ծննդ. Դ 14), սկսում է առավել սաստիկ զգալ անեծքի ազդեցությունն ու հետեւանքները: Դ. Շեդրովիցկին գրում է՝ որքան շատ ժամանակ էր անցնում, այնքան եղբայրասպանն ավելի էր սարսափում՝ հետապնդվողի մոլուցքով ախտահարված, փախչում է իր իսկ հիմնադրած Ենոք քաղաքից, թաքնվում անտառներում, եղեգնուտներում, ծածկվում կենդանիների մորթիներով... Նա վախենում էր իր իսկ խոսքերի իրականացումից՝ *«...ով հանդիպի, կսպանի ինձ»* (հմմտ. Ծննդ. Դ 14. տե՛ս Д. В. Щедровицкий, Введение в Ветхий Завет. Пятикнижие Моисеево, Москва, 2003): Ծննդոց Դ գլխից հետո այլեւս տեղեկություն չենք գտնում Կայենի եւ նրա մաման հանգամանքների վերաբերյալ: Տեսակետ կա, որ նա սպանվում է իր թոռան ձեռքով, որը կույր էր:

Պատմությունը չի մոռացել նաեւ Հուդա Իսկարիովտացուն (ըստ որոշ մեկնությունների՝ «Իշ Կարիոթ»՝ մարդ Կարիոտ քաղաքից), որն արծաթասիրության, ուրացության, մատնության եւ ստոր դավաճանության մարմնավորումն է: Նա ինքն է գնում քահանայապետների եւ օրենսգետների մոտ ու առաջարկում Քրիստոսին մատնել. *«Ի՞նչ կկամենաք ինձ տալ, որ ես նրան ձեզ մատնեմ»* (Մատթ. ԻԶ 14–16): Ուշագրավ է, որ Հովհան Ոսկեբերանը, խոսելով Հուդայի մասին, դավաճանությունը որակում է որպես անձնական հատկություն... ոչ թե զուտ արարք կամ գործողություն, այլ անհատի հատկություն՝ որոշակիորեն ձեւավորված հոգեվիճակ: Ըստ այսմ՝ միայն գործողություն կամ արարք կատարողը չէ դավաճան, այլ նաեւ նա, ում բարոյական գիտակցությունն ու ընկալումները խեղվել են, ով հոգով ու մարմնով արդեն իսկ վաճառվել է, ով իր ներսում ոչնչացրել է բարոյական բոլոր արժեքներն ու արգելքները: Այսինքն՝ Հուդան, մինչ մատնության համբույրը (հմմտ. Ղուկ. ԻԲ 48), արդեն դավաճան էր: Քահանայապետները Հուդային խոստանում են տալ երեսուն արծաթ (հմմտ. Մատթ. ԻԶ 15): Ուշագրավ է, որ Հին Կտակարանում երեսուն արծաթի վերաբերյալ տարբեր վկայություններ կան: Այսպես՝ Ելից գրքի ԻԱ 32-ում երեսուն արծաթը ստրուկի արյան գինն է, մարգարեություններում՝ մշակի մեկ տարվա վարձը (հմմտ. Զաք. ԺԱ 12): Իսկ Հուդայի նենգ արարքից հետո այն դառնում է «մատնության գինը»:



Մատնության մասին հայտնում է Ինքը՝ Հիսուս Քրիստոս, վերջին ընթրիքի ժամանակ. *«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզնից մեկն ինձ մատնելու է»* (Հովհ. ԺԳ 21): Եվ երբ աշակերտներից յուրաքանչյուրը հարցնում է Նրան՝ *«Մի՞թե ես եմ, Տեր»*, Աստծու Որդին պատասխանում է. *«Ով իր ձեռքն ինձ հետ պնակի մեջ մտցրեց, նա՛ է ինձ մատնելու: Մարդու Որդին կգնա այս աշխարհից, ինչպես Նրա մասին գրված է, բայց վա՛յ այն մարդուն, ում ձեռքով կմատնվի մարդու Որդին: Ավելի լավ կլիներ նրա համար, եթե այդ մարդը ծնված չլիներ»* (Մատթ. ԻԶ 23–24):

Ուշագրավ զուգահեռներ արձանագրենք: Ինչպես Աստված կանխավ գիտեր Կայենի չար մտադրության ու աններելի արարքի մասին, այնպես եւ Քրիստոս գիտեր Հուդայի մատնության մասին: Երբ Աստված Կայենին ասում է. *«Հանգի՛ստ եղիր, դու կարող ես մեղքից ազատվել, դու ի վիճակի ես այն հաղթահարելու»* (Ծննդ. Դ 7), նրան մեղքի ճիրաններից ազատվելու, ապաշխարելու հնարավորություն է տալիս: Նույնպես եւ Քրիստոս, թեեւ գիտեր՝ ով է իրական մատնիչը, սակայն որեւէ մեկի անունը չի նշում, իսկ *«...ձեզնից մեկը մատնելու է Ինձ»* խոսքերով մինչեւ վերջին պահը հնարավորություն է ընձեռում Հուդային հետ կանգնելու իր չար մտադրությունից: Աշակերտների հարցին, թե ով է մատնիչը, Տերը պատասխանում է. *«Նա է, որի համար ես այս պատառը կթաթախեմ եւ կտամ իրեն»: Եվ թաթախելով պատառը՝ տալիս է Իսկարիովտացի Հուդային»* (Հովհ. ԺԳ 26): Ըստ հնագույն ավանդույթի՝ հրավերքի ժամանակ պատառը որեւէ մեկին տալը բարեհաճության, պատվի եւ գնահատանքի նշան էր համարվում: Այսպիսով՝ պատառը Հուդային տալով՝ Քրիստոս փորձում է փրկել նրան կործանումից: Սուրբ Գրքի մեկնիչներից ոմանց կարծիքով (օրինակ՝ Սարգիս Կունդի)՝ Քրիստոս պատառը թաթախելուց հետո է տալիս Հուդային: Այսինքն՝ թաթախմամբ խորհրդանշորեն մաքրվում, սրբվում են աստվածային այն շնորհները, որոնք տրվել էին Իսկարիովտացուն:

Ո՛չ Կայենը, ո՛չ Հուդան, ըստ էության, խղճի խայթ չեն զգում եւ չեն հրաժարվում մեղքից, այնինչ իրական զղջումն ու ապաշխարանքը կարող էին նրանց հոգիները փրկել ողբերգական կործանումից: Նույնիսկ Աստծու զգուշացումից հետո նրանք ամեն գնով ավարտին են հասցնում իրենց հրեշավոր մտադրությունները:

Չնայած Հուդայի մասին սուրբգրային վկայությունները խիստ համառոտ են, սակայն ավետարանական որոշ տեղիներ ընթերցելիս հստակ պատկերացում ենք կազմում նրա էության, բնավորության գծերի ու խառնվածքի վերաբերյալ: Օրինակ՝ ավետարանիչները նկարագրում են, թե ինչպես է Մարիամ Մագդաղենացին ազնիվ նարդոսի թանկարժեք յուղով օծում Քրիստոսի ոտքերը, իսկ Հուդան այս առնչությամբ բացահայտ ցույց է տալիս իր դժգոհությունը (հմմտ. Մարկ. ԺԴ 3–5, Հովհ. ԺԲ 3–5):

➥ էջ 8

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի գահակալների ավանդը Մեծ եղեռնի նահատակների հիշատակի հավերժացման գործընթացում

➥ էջ 3, 5

Ապրիլի 24-ը հռչակվեց «Յիշատակ Սրբոց նահատակաց, որք կատարեցան յընթացս Ցեղասպանութեան Հայոց վասն հաւատոյ եւ վասն Հայրենեաց»: Որից հետո տեղի ունեցան Հայոց ցեղասպանության նահատակների սրբապատկերների քողազերծումը եւ օրհնությունը: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսն աղոթքից հետո սրբալույս մյուռոնով օծեցին երկու սրբապատկերները (օծված սրբապատկերն ապրիլի 24-ին երկրպագության դրվեց Ծիծեռնակաբերդում): Սրբադասման արարողությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի՝ Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների բարեխոսության հայցով, եւ ապա, սրբադասման պատմական առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը իրենց հայրապետական պատգամը հղեցին աշխարհասփյուռ հայությանը:

Սրբադասման արարողության ավարտին՝ ժամը 19:15-ին (պատահական ընտրված ժամ չէ, այլ խորհրդանշում է 1915 թվականը), ազդարարվեց լռության րոպե, ապա Մայր տաճարի, աշխարհի գրեթե բոլոր հայկական եկեղեցիները եւ քրիստոնեական քույր եկեղեցիները հնչեցրին 100 գույժ-զողանջ, որին հաջորդեց տոնական զողանջը՝ ի պանծացումն Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների:

Այս հոգեզմայլ եւ հրաշափառ միջոցառումներով, հիրավի, ամբողջացան Մեծ եղեռնի նահատակների հիշատակի հավերժացման ձեռնարկումները, եւ երջանկահիշատակ Վազգեն Առաջին Հայրապետի մարգարեական խոսքերի համաձայն՝ այդ օրը «Հայ ժողովուրդի զաւակները, որ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի... երկիւղածութեամբ կը խոնարհին բիւրաւոր նահատակներու անյայտ գերեզմաններուն առջեւ ու կաղօթեն անոնց անմահ հոգիներու խաղաղութեան եւ երանութեան համար: Եւ կը վերանորոգեն իրենց ուխտը՝ սուրբ պահելու անոնց նուիրական յիշատակը ու մնալու հաւատարիմ անոնց լոյս հաւատքին, անոնց հերոսական ոգիին, հայոց ազգը մէկտեղուած եւ հայոց ամբողջ երկիրը փրկուած տեսնելու անոնց պայծառ երազին»:

Այսպիսով՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, հավատարիմ իր ազգային եկեղեցի լինելու էությանը եւ սեփական ժողովրդին բաժին հասած ցավերին ու արհավիրքներին միասնաբար դիմակայելու իր առաքելությանը, եւս մեկ անգամ ապացուցելով իր ազգային եկեղեցի լինելը՝ ձեռնամուխ եղավ Մեծ եղեռնի նահատակների հիշատակը հավերժացնելու եւ հավուր պատշաճի նշելու գործին: Հայ Առաքելական եկեղեցին՝ ի դեմս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, որպես որդեկորույս, սգատեր մայր, բայց ոչ երբեք եղերամայր, ամեն ինչ արեց կորուսյալ զավակների խնկելի հիշատակը իբրեւ նահատակների կրոնական սգատոն պատշաճորեն նշելու գործում: Հայոց Եկեղեցու եւ Մայր Աթոռի առաջին ոգեկոչումները, իբրեւ մայրական սիրո եւ գուրգուրանքի արտահայտություն ու որդեկորույս ծնողների՝ զավակների հանդեպ հիշատակի, սգո եւ հարգանքի տուրք, նվիրված են եղել Մեծ եղեռնի օրերին նահատակված հայ մտավորականների եւ հոգեւորականների հիշատակին: Հետագա անբարենպաստ ներքաղաքական ու աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում, բազմաթիվ փորձություններ ու խոչընդոտներ հաղթահարելով, երախտավոր Մայր Աթոռը, հանձինս իր հայրենասեր-որդիասեր, շրջահայաց ու ողջամիտ գահակալների, կարողացավ միս ու արյուն տալ, իրականացնել իր հոգու գանձատուն-ավանդատան մեջ անթեղված նվիրական երազանքն ու ծնողական պարտքի բյուրեղացումը՝ Մեծ եղեռնին զոհ գնացած զավակների հիշատակի հավերժացումը:

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Մուշեղ Գալշոյան

➥ էջ 4

Թշնամու՝ Մեհմետ Էֆենդու առջեւ կանգնած Թորոսը, զայրույթից կրակ կտրած, մերկ մատներով վառվող ածուխ է մոտեցնում նրան. «Կրակը ցուցամատով ու միջնամատով բռնած, մոտեցավ շեհիտին. «Վառե քու ղայլոն, աղա,– ոստիկանապետը ետ-ետ գնաց... Թորոսը սուր նայում էր շեհիտի աչքերի մեջ,– վառե, աղա...»:

Նույնը հանդիպում է նաեւ Բելովի «Հյուսիսային պատմություններ» վիպակում. «Կոզոնկովը պարտք ուզեց, գրպանից լուցկի հանեց: Չրթացրեց, կպցրեց: «Չէ, Կոզոնկով, ես քեզ պարտք չեմ տա»,– ասաց Ֆեդուլյոնոկը <...> վառարանից մի ածուխ հանեց, դրեց բռի մեջ ու ծխախոտը կպցրեց: «Այ, ասաց, Կոզոնկով, երբ որ մարդավարի կպցնել սովորեցիր, էն ժամանակ էլ կգաս: Մի խոսք չեմ ասի, վերջին ունեցածս կտամ»:

Երկու դեպքում էլ պատկերն օգտագործված է ընդգծելու հերոսների կամքը, դիմադրության պատրաստ ներքին հզոր ուժը: Սրանք, իհարկե, ընդհանրության մասնավոր դեպքեր են, կարեւորը բնաշխարհին ու բնաշխարհի մարդուն նայվող հայացքի ուղղությունն է, որը եւս ընդհանրություններին մեծ շրջանագիծ է ծրում՝ հենակետեր ունենալով ապրելու բարոյականությունը, սովորույթներն ու կենցաղը, նիստուկացն ու լեզուն, բնության հետ ունեցած դարավոր կապերը:

Ահա տեսական եւ ստեղծագործական այս շրջագծով էլ ճանապարհ է բացվում դեպի Մ. Գալշոյանի գեղարվեստական աշխարհը (*Մ. Գալշոյանի գեղարվեստական երկերի վերլուծությունը տես նաեւ մեր մյուս հոդվածներում՝«Հիշատակների երկիր» եւ «Հիշողություն ընդդեմ մոռացության»՝ զետեղված «Ժամանակ եւ շարժում» (1984), «Հելիկոնի աստղը» (1988) գրքերում*):

Մ. Գալշոյանի առաջին գիրքը խորհրդանշական վերնագիր ունի՝ «Կռունկ»: «Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս» երգի այս տողը չի ասվում, բայց բոլոր հերոսների հոգեբանությունը ներծծված է այդ զգացողությամբ:

Անցյալ դարձած ժամանակների վերհուշի, ապրած օրերի հաստատման, պայծառ

կարոտի եւ անսկիզբ ու անվերջ մի տանջալի թախծի տվայտանքներով է գրված ամբողջ գիրքը: Փոխվում են ժամանակները, փոխվում է կյանքը, բայց մարդիկ ապրելու հոգեբանական հենակետեր են որոնում եւ ապրում իրենց կորուստներով ու երազին պահ տալիս կորստի հիշողությունը, ապրում անցյալի կարոտով եւ ապավինում հույսին ու սպասումին: «Կռունկ»-ն ասես շարունակվում է ճիշտ այն տեղից, որտեղ կանգ առավ Բակունցը, որտեղ վերջանում է «Ծիրանի փողը»: Ահա Հազրոյի երազանքը. «Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստեմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն իմ չորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երեգեր, մարդիկ հալալզուլալ ախպրտաց պես գրկեն զիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնություն: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բանցրանա երդիկներեն, խմեմ մըր լուս աղբըրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարերու վրեն, մըր Մարութա բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ»:

Սասնա նույն բնաշխարհն է Մ. Գալշոյանի հերոսների աչքի առաջ եւ այդ բնաշխարհի մարդիկ, որոնց կյանքն անցել է կրակների ու կրակոցների միջով:

Գործերից առաջինը «Ձորի Միրոն» վիպակն է: Աշխարհում ունեցած իր միակ երջանկությունը՝ մինուճար որդուն, Միրոն ճանապարհ է դնում բանակ՝ պատերազմ: Վիպակը զարգանում է հերոսի ներքին խոսքի աստիճանական ծավալմամբ: Ստեղծվում է բովանդակության երկու հուն՝ վերհուշի եւ դրանից բխող մտահանգումների, որոնք՝ որպես կենսափորձից ծնված խորհուրդ, հայրը ժառանգում է որդուն: Բացվում են Ձորի Միրոյի կյանքի փակագծերը, ապրած տարիները շաղախի պես լցվում են նրա ու որդու միջեւ եւ նրանց ձուլում իրար այնպես, ինչպես հնագույն բերդերի վեմեր, որ փլատակվելիս անգամ անբաժան են իրարից: Միրոյի միտքը թափառում է կորցրած ծննդավայրում եւ հուշ դարձած հարազատների պատկերների միջոցով վերակոչում պատմությունը:

Ահա հուշերի մշուշի մեջ երեւում է Հարութ պապը՝ բահը ուսին, ծաղկած ծիրանենուն հենված: Բայց եկել էր պահը, եւ Հարութ պապը պետք է մեկներ այս աշխարհից: Միրոյի վերհուշի մեջ ծիլ է տալիս այն տարիների հիշողությունը. «Առավոտ էր, ամեն մեկն իր բան ու գործին, ինքը կանգնել էր ընկուզենու տակ, նայում էր պապին, մտել էր գլուխն ու դուրս չէր գալիս. էսօր Հարութ պապը աշխարհից կթողնի, կերթա... Ու սիրտը ցավում էր. ինչո՞ւ էրթա, իր այգին թողնի ո՞ւր էրթա... Մնա, մա՜նր, մա՜նր փոր անի ծառերի տակ, հոգնի՝ մեջքը տա ծիրանենուն, ծաղկաթերթեր կաթկթան գլխին ու կորչեն ճերմակ մազերի մեջ»:

Այսպես կամաց-կամաց Միրոյի աչքի առաջ բոլորը հեռանում են աշխարհից՝ մի հարս Խանդութ, մի կողակից Նարե, անուն առ անուն մի ամբողջ գերդաստան: Այսպես ամբողջ կյանքում ապրել է Ձորի Միրոն՝ երազի մեջ պահած հեռու մի երկիր, մի տխրամած կարոտ, որն իր եւ իր ցեղ ու տոհմի անցյալն է: Այդ անցյալն էլ անընդհատ նրա մեջ ոգեկոչում է հեռավոր պատկերներ: Իսկ այդ անցյալով նրա ներկան ապրում է այնքանով, որքանով կա Հարութ որդին: Այդ անցյալի հավերժացման ձգտումն է, որ ամեն ինչ կորցնելուց հետո նրան ստիպում է ունենալ Հարութ որդուն՝ որպես Հարութ պապի կենդանի հիշատակ, որպես ցեղ ու տոհմի ապրող շարունակություն: Ճանապարհին Միրոն մի պահ կտրվում է անցյալից, ավելի սեղմվում որդուն եւ ասում. «Հարութ... Աշխարհք հող ու ջրից անուշ բան չկա: Մարդու ուժ հողի մեջ է: Քանի հող չեն խլե ոտաց տակեն՝ մարդ անպարտ է, թեկուզ զարկվի՝ անպարտ է, խլեցին՝ գերի է, գառ»:

Հուշերը կրկին նրան տանում են հեռու, բացում կորստի անհատակ ողբերգությունը եւ որպես հերթական մի խորհուրդ՝ պահ տրվում պատերազմ մեկնող որդուն. «Հարութ, մարդ սպանելուց էլ հարկ է մարդ մարդ մնա»: Եվ հետո. «Հարութ, գառ, լսե ու մտահան չանիս, վիզ չծռիս, մահ չընդունիս կամոք: Կռվի քու մահվան դեմ. հաղթ եղար, կապրիս, չէ՝ մեռնել կա ու կա: Քու ձեռք ու ոտք կկապեն, սիրտ կապել չեղնի: <...> Հարութ, էն մարդ կամոք կընդունե մահ, ով վրեժ ու փափագ չունե»:

Այսպես դրվագ առ դրվագ անցյալից վերընձյուղվում է Միրոյի ներկան, որը նրա ու նրա տոհմի պատմության կենդանի դասն է՝ առաջին հերթին բարոյականության օրենքներով:

Ամբողջությամբ կարոտի երգ է սա՝ հայրենի լեռ ու քարի, իրիկնահացի նստող մի մեծ գերդաստանի եւ անցած ճանապարհի վերհուշով: Օրերից մի օր օտար երկրում Միրոն երկրացի էր տեսել, որը նրան ասել էր. «Միրո, իմ սրտի մեջ յոթ տարվա կարոտ կա, մեր Սասնա ձորերով մեկ կարոտ՝ գեղ ու գերդաստանի համար կա՛, սար ու ձորի համար կա՛, քար ու ծառի համար կա՛... Միրո՛, մեր էրկրի գել ու գազանների, մեր էրկրի օձերու համար էլ իմ հոգու մեջ կարո՛տ կա...»: Այստեղից արդեն Միրոն է ուղղակիորեն շարունակում եւ ասում որդուն. «Լսե, Հարութ, կարոտ զորե՛ղ-զորեղ է, կարոտից զորեղ բան աշխարհք չկա: <...> Կարոտի հետ տխրություն կմեծնա, գառ... Կարոտ տխրություն է, անո՛ւշ-անուշ տխրություն է: Ու էդ տխրություն... մարդու հոգին կմեծացնե, մարդու կդարձնե աժդահա, հերոս»: Ահա կարոտի «փիլիսոփայությունը»՝ ըստ Ձորի Միրոյի կենսագրության:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՌԱՓԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1830–1892)

էջ 5

Թվում էր՝ ոչինչ չպիտի խանգարեր նրանց երջանկությանը. հարսանեկան զգեստները պատվիրված էին արդեն, երկու օր հետո էր պսակադրությունը՝ Եփրեմ վարդապետի հետ պայմանավորված: Բայց ահա ուշ երեկոյան մի օտարական նրան հենց նոր հրաժեշտ տված Միքայելից հարցնում է Մարիի հասցեն: Հետո է պարզվում, որ անծանոթը Մարիի նշանածն է եղել: Հաջորդ օրը տարածվում է Մարիի մահվան բոթը. իրականացել էր «մահ թույնից» կանխատեսումը, իսկ ճշմարտությունը Միքայելն իմանում է թույն խմելուց առաջ իրեն գրած նրա նամակից. «Ներե՛ ինձ, սիրական Միքայել, որ իմ բարեկամությունը, բացի վիշտ ու թախիծեն, ոչինչ չի տվավ քեզ այս հինգ օրերը: ...Այժմ հասկանո՞ւմ ես, անփորձ երեխա դու, ինչու թախանձագին խնդրում էի քեզ գողանալ, փախցնել, բռնի կինդ շինել ինձ... դու չհոժարեցար առանց վայրկյան իսկ հապաղելու ինձ քո կինը դարձնել. (ժամանակը շատ կարճ էր). ինձ կինդ անել քու ձեռին էր, բայց քու հարսդ լինել ես չէի կարող — *ես նշանած էի*» (3, 80):

Մարիի իրական նշանածն այլեւս չի երեւում, բայց Միքայելի բացառիկ պարկեշտության ու սիրո վերջին հավաստումը հաջորդ օրը Մարիին իր ձեռքով հողը դնելու պահին նրա դագաղի մեջ բոլորից թաքուն իր ողջ փողը «սպրդեցուցած» հերոսի վերջին ինքնախոստովանությունն է. «Մարիի նման գանձը կորցնելուց հետո՝ ժանգոտ ոսկին ի՞նչ արժեք պիտի ունենար իմ աչքումը» (3, 80):

«Փառասերը» (1880) երկրորդն է վեպերի մեջ: Այստեղ առկա են ռոմանտիկների նախասիրած երկու սուր հակադրություններ. մեկը՝ նույն Ալթմազովի ներքինի եւ արտաքինի հակադրությունն է, մյուսը՝ հակադրությունն է Ալթմազովի եւ Սուսաննայի միջեւ:

Առաջին հակադրությամբ Պատկանյանը մի կերպարով լուծում է երկու հիմնախնդիր. առաջին՝ հայ մարդն իր ազգային բնական որակներով ի՞նչ առավելություններ ունի եւ ի՞նչ հրաշագործությունների է ընդունակ, եւ երկրորդ՝ ինչպե՞ս է նա իր փառասիրության ու անձապաշտության պատճառով չարիք դառնում թե՛ իր եւ թե՛ ազգակիցների համար:

Ըստ որոշ ակնարկների՝ Ալթմազովի բնական առավելությունները՝ խելացիությունը, բանիմացությունը, բարեկրթությունը, սիրունությունը նախատիպ Քերովբե Պատկանյանինն են: Նկատելի է, որ Պատկանյանն իր հերոսների դրական կամ ժխտական հատկանիշները ներկայացնում է ոչ միայն հեղինակային դիսկուրսով, այլեւ մյուս՝ հատկապես այլազգի հերոսների՝ նրա նկատմամբ վերաբերմունքով: Առաջին անգամ հանդիպած համալսարանի պրոֆեսորը, ինչպես նաեւ անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի կանայք զարմացած են Ալթմազովի բարեկրթությամբ, շարժուձեւով, մտացիությամբ, երաժշտական ունակություններով:

Պրոֆեսորը, օրինակ, ասես «Ֆիդիասի կարկինով գծած» համաչափություններով Ալթմազովի հետ առաջին զրույցից հետո ցնցված է. «Այս ի՞նչ սատանա էր, խելքս չի հասնում. այդ ի՞նչ մարդ էր, որ ես տեսա — իշխանա՞զն էր, թե ավազակապետի որդի. այսքան հպարտություն, այսքան արտաքին շնորհք... Եվ այսպիսի որդիներ ունեցող ազգը հարյուրավոր տարիներե ի վեր ընկճված է աղքատ, կեղտոտ, տխմար, տգետ, անճոռնի թաթարներե, քյուրդերե — անհասկանալի՞ է» (3, 84):

Իսկ եվրոպացի կանանց հիացմունքն անցնում է բոլոր սահմանները: Երբ Ալթմազովն ինքնավստահ հպարտությամբ մերժում է իր ազգային պատկանելության վերաբերյալ բոլոր կարծիքները եւ միայն «թույլ ձայնով» հայտարարում, թե ինքը կովկասցի է եւ հայ, անգլիացի կինն Ալթմազովին լսելի բարձրաձայնում է. «Կովկասյան ցեղ որ ասում են, այդ ես շատ նոր կարդացի Թայմզ լրագրի մեջ, ոչ այլ ինչ է, եթե ոչ հայերը, որոնց մտավոր զարգացումն, կատարելագործության ընդունակությունը եւ արտաքին գեղեցկությունը միշտ եւ հանապազ գոված է եղել ամեն ազգերի մեջ: Եվրոպացիք իզուր առգրում են այդ հատկությունները վրացիներուն, կիսաթուրք-կիսամոնղոլ չերքեզներուն... այդ սխալ է... Հայտնի բան է, մի քանի ազգերի նախանձն է, որ քաղաքական դիտմունքներե դրդված, պարզապես մերժում են եւ չգիտցողս ձեւանում են պատմական ճշմարտությունը: Փոքր Ասիայի ապագան, նույն եւ Սեւաստապոլին, այդ խոմ մեր լորդ Դերբին վաղուց ասել է, պատկանում է հայերին, եթե նոքա Թաղեսի երկու խոսքը հասկանային — «Ճանի՞ր զքեզ»» (3, 85–86):



Ինքնին հասկանալի է, որ հայերի մասին օտարների այս կարծիքները հենց Պատկանյանինն են, որ նա ուղղում էր նոր սերունդներին: Նրանք, ինչպես Ալթմազովը, իսկապես չէին ճանաչում եւ չգիտեին իրենց արժեքը: Եվ հենց այդ էր նրանց թշվառությունների պատճառը: Ինչո՞ւ էր Երեւանի նահանգի գյուղերից Թիֆլիս մեկնած, գիմնազիան գերազանցությամբ ավարտած Ալթմազովը հասել Պետերբուրգ, համալսարան ընդունվելո՞ւ, բայց դա միջոց էր միայն, իսկ բուն նպատակը՝ հոր խորհրդով՝ ուրիշ: Նա պիտի գտներ չափազանց հարուստ ծնողների դուստր հարսնացու, ամուսնանար եւ ժառանգեր նրանց հարստությունը:

Պրոֆեսորի միջնորդությամբ Ալթմազովը հայտնվում է Կաբիլկինների տանը՝ նրանց զավակներ Միշայի ու Եվդոկիայի ուսուցչի կարգավիճակով: Բայց Ալթմազովը գործում է մուլքադար հոր խորհրդով եւ իր արտաքին հատկանիշների շնորհիվ կարծես ունենում է ժամանակավոր հաջողություն: Եվդոկիային հրապուրում է սիրո խոստումներով, նրա ծնողներից թաքուն՝ անգամ մատանիներ են փոխանակում: Իր հաջողությունը նա համարում է այնքան իրական, որ հորը նամակ է գրում. «Ամեն բան դեպի լավն է գնում: Իշխան Կաբիլկինը 40 000 օրավար հող ունի, բանկում 4 000 000 մանեթ նաղդ փող, եւ ոչ մի կոպեկ պարտք, իշխանական պահարանների մեջ 500 000 մանեթի ակնեղեն, ոսկե զարդեր եւ արծաթե սպասներ ունի, իսկ աղջիկը ինձ վրա մինչեւ ականջները սիրահարված է» (3, 100):

Ուրեմն՝ ո՛չ ուսումը, ո՛չ գիտությունը, ո՛չ էլ սերն ու մարդը նրա համար արժեք չէին, այս հարստությանը տիրանալն էր նրա գերնպատակը:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Նրանք մնում են որպես դավաճանության խարանը կրողներ

էջ 6

Հովհաննես ավետարանիչը գրում է, որ Հուդան *«...այս ասաց ոչ թե նրա համար, որ աղքատների համար էր հոգում, այլ որովհետեւ գող էր, եւ գանձարկղը ինքն էր պահում, եւ ինչ որ այնտեղ դրվում էր, ինքն էր վերցնում...»* (Հովհ. ԺԲ 6):

Հետաքրքիր մեկ հանգամանք եւս. Հուդան, չնայած տասներկու առաքյալներից մեկն էր, սակայն Քրիստոսին երբեւէ չի անվանում Տեր, այլ միայն «Ռաբբի»՝ Վարդապետ կամ Ուսուցիչ (հմմտ. Մարկ. ԺԴ 45, Մատթ. ԻԶ 25): Նրա դավաճանությունը կանխամտածված ու դիտավորյալ էր. *«Սա գնաց բանակցեց քահանայապետների, օրենսգետների եւ ժողովրդի իշխանավորների հետ, որ Հիսուսին նրանց մատնի: Նրանք ուրախացան եւ խոստացան նրան արծաթ տալ»* (Ղուկ. ԻԲ 4–5), այսինքն՝ դա պարզապես սխալմունք չէր:



Մեղանչումից հետո Եւ Կայենը, Եւ Հուդան հոգեկան ծանր ապրումներ են ունենում, որոնք կործանարար են լինում նրանց համար: Այսպես՝ Կայենն ապրում էր աննկարագրելի սարսափի մեջ՝ ահ ու դողով, մշտապես վախենալով սեփական կյանքի համար: Իսկ Հուդան նույնիսկ իր դավաճանության անհերելի հետեւանքները գիտակցելուց հետո պատրաստ չէր իրական զղջման ու ապաշխարության, եւ ինքն է կայացնում իր դատաստանը (հմմտ. Մատթ. ԻԷ 3–5): Հուդայի «զղջումը» մտածելակերպի փոփոխության արդյունք չէր, այլ լոկ գործած մեղքի համար ափսոսանք (հմմտ. Մատթ. ԻԷ 4): Երկուսի դեպքում էլ մեղանչումից հետո նրանց պատում է Աստծու կողմից լքվածության, հուսահատության, մերժված լինելու հոգեմաշ զգացումը: Ահա այստեղ ակնհայտ է դառնում սատանայի «խաղը». գործողությունից կամ հանցանքի կատարումից առաջ սատանան այդ արարքը ներկայացնում է որպես բնական ու աննշան, իսկ մեղանչումից՝ անկումից հետո այն ծանր ու աններելի է թվում: Չարը հմտորեն խաղում է զգացմունքների հետ՝ ստիպելով ենթարկվել իր կամքին, ինչը, ի վերջո, հանգեցնում է մարդու մարմնական ու հոգեւոր ոչնչացմանը:

Հուդայի մահվան մասին վկայում է միայն Մատթեոս ավետարանիչը: Մատնիչն ասում է քահանայապետներին ու ժողովրդի ծերերին. *«Մեղանչեցի, որովհետեւ արդար արյուն մատնեցի»* (Մատթ. ԻԷ 4): Վերջիններս քամահրանքով պատասխանում են նրան. *«Մեր հոգը չէ, դո՛ւ գիտես»* (Մատթ. ԻԷ 4): Պատմական բազմաթիվ դեպքերով հիմնավորված իրողություն է՝ դավաճանին արհամարհում են նաեւ նրանք, որոնց նա ծառայություն է մատուցել: Հուդան արծաթյա դրամները նետում է տաճարի մեջ ու գնում, կախում է ինքն իրեն (հմմտ. Մատթ. ԻԷ 5): Քահանայապետները, երեսուն արծաթը վերցնելով, որոշում են դրանք չգցել տաճարի գանձանակը, քանի որ «արյան գին» են: Եվ խորհրդակցելով՝ գնում են բրուտի ագարակը՝ որպես գերեզման օտարների համար (հմմտ. Մատթ. ԻԷ 6–7): Այն հետագայում կոչվում է «Արյան ագարակ» (հմմտ. Գործք Ա 18–19):

Եվ հայրաբանական, եւ գեղարվեստական գրականության մեջ բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել Կայենի ու Հուդայի կերպարներին: Նրանց վերաբերյալ նույնիսկ ֆիլմեր են նկարահանվել, նրանց եղկելի արարքները տարբեր տեսանկյուններից ներկայացնելու փորձեր են կատարվել: Այդուհանդերձ, պատմության մեջ նրանք շարունակում են մնալ որպես դավաճանության խարանը կրողներ, չարիքի մարմնավորումներ: Ցավոք, այսօր եւս ծնվում են կայեններ ու հուդաներ՝ տեսակով եւ էությամբ թույլ արարածներ... թույլ՝ բառի բոլոր իմաստներով... Աներկբա է, որ դավաճանությանն առավելապես հակված են նրանք, ովքեր կամազուրկ են, մորթապաշտ, անհավասարակշիռ, ունեն անկայուն, «հեղհեղուկ» բնավորություն, մտավոր զարգացման ցածր մակարդակ, զուրկ են հոգեւոր ու բարոյական արժեքներից... Թույլ մարդիկ հեշտությամբ են գնում այդ զազրելի քայլին՝ իրենց առջեւ ծառացած խնդիրները կամ անձնական ցանկություններն իրագործելու նպատակով: Նրանք մշտապես փնտրում են բարդ խնդիրների դյուրին լուծումներ, ուստի նրանց համար ավելի հեշտ է դավաճանելը, քան հավատարիմ մնալն ու չդավաճանելը... Ուժեղ լինելն ամենեւին էլ հեշտ չէ, այնինչ թուլամորթ, տականք ու դավաճան լինելն ավելորդ ջանքեր չի պահանջում: Թույլ մարդիկ նաեւ սարսափելի վախկոտ են... Ոճրագործությունից հետո նրանք տառապում են իրենց բնազդական վախերի պատճառով եւ, ըստ էության, կորցնում են ամեն ինչ՝ չկարողանալով այլեւս ապրել ներկայում, զրկվում են նաեւ ապագայից եւ «շահում» միայն եղերական վախճան:

Արփինե ՉԱՆԹԻԿՅԱՆ

Կարգալույծ է հռչակվել Սիփան վրդ. Գեւորգյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Սիփան վրդ. Գեւորգյանը՝ ծառայության վայրն ինքնակամ լքելու կարգազանց ընթացքի համար: Կարգալույծ եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Արթուր Գեւորգյան ավազանի անունով:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 15.04.2021 թ.
Տպաքանակը՝ 1225